



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Հ.Ա.Ե. ԵՂԲԱՅՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՏՕՆԵՑ ԻՐ 126-ԱՍԵՎԿԸ

**Ս. Հոգիով Առաջնորդեցեք Ձեր կեանքերը, հաւատարիմ մնացեք
 Հայց. Առաքելական Եկեղեցւոյ կարգին, կանոնին եւ սրբութիւններուն**

Պատգամեց Առաջնորդ Սրբազան Հայրը

Չորեքշաբթի, 3 Մայիս 2006-ի երեկոյեան, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայց. Առաքելական Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան հիմնադրութեան 126-ամեակի խրախճանք-սիրոյ ընթրիքը, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի: Սրբազանին կողքին ներկայ էին Քրիստոնեական Դաստիարակութեան Վարիչներէն՝ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիլիկեան, Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Վիգէն Աւգ. Քհնյ. Վասիլեան, Ազգային Վարչութեան փոխ-ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Մկրտիչեան, եղբայրակցութեան պատասխանատուները, պատանեաց եւ երիտասարդական խումբերու անդամ-անդամուհիներ, եւ հոգեւոր եղբայրներ ու քոյրեր:

Երեկոն սկսաւ Տէրունական Աղօթքի հաւաքական կատարումով, որմէ ետք Առաջնորդ Սրբազան Հայրը կատարեց սրտաբուխ աղօթք, եւ իր աղօթքին մէջ շնորհակալութիւն յայտնեց ամենաբարին Աստուծոյ՝ այս համախմբումին համար, սեր եւ խաղաղութիւն՝ եղբայրասիրաց անդամներու կեանքին ու ընտանիքներուն, եւ յիշեց երկու օրեր առաջ Հայաստանէն Ռուսիա ուղղուող օդանաւին ջախջախման զոհերը, աղօթելով անոնց հոգիներու լուսաւորութեան եւ անոնց պարագաներուն՝ Ս. Հոգւոյ միխթարութեան համար:

Աղօթքին յաջորդեց եղբայրակցութեան Քայլերգի երգեցողութիւնը ներկաներուն կողմէ, որմէ ետք բարի գալստեան խօսք արտասանեց Յակոբ Եղբ. Աճեմեան:

Եղբայրակցութեան 126 տարիներու համառօտ պատմականը ըրաւ եղբայրակցութեան ցկեանս ատենապետ եւ վաստակաշատ մշակ Արշակ Եղբ. Գալէստերեան: Ապա ներկաները երգեցին «Գովեա՛ Երուսաղէմ գՏէր» շարականը, որմէ ետք Հայր Պարթեւ կատարեց սեղանի օրհնութիւնը:

Սիրոյ ընթրիքի ընթացքին, եղբայրակցութեան պատանեաց եւ երիտասարդաց խմբակները ներկաներուն հրամցուցին հոգեւոր-գեղարուեստական ճոխ յայտագիր՝ առաջնորդութեամբ եւ կատարողութեամբ քոյր Նուարդ Դարբինեանի եւ եղբայր Աւօ Գապակչուզեանի: Կատարուեցան ընթերցումներ՝ Ս. Գիրքէն եւ Ս. Գրիգոր Նարեկացիէն, արտասանուեցան հոգեւոր թեմայով եւ

մայրերու նուիրում թանաստեղծութիւններ. ջութակի, փչողական գործիքի, դաշնակի ու երգեհոնի վրայ հրամցուեցան հայկական մեղեդիներ եւ հոգեւոր երգեր: Զոգեւոր երգերով հանդես եկաւ նաեւ Մաննիկ Մանուկեան, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Փրոֆ. Լեւոն Աբրահամեանի:

Զոգեւոր այս մթնոլորտը իր գագաթնակէտին հասաւ Առաջնորդ Սրբազան Զօր հոգեշունչ եւ հոգեթով պատգամով: Սրբազան Զայրը մեծապէս գնահատեց եղբայրակցութեան պատասխանատուներուն եւ անդամներուն կապուածութիւնը եւ ամբողջանուէր գործակցութիւնը Զայ Եկեղեցւոյ եւ հայկական արժէքներուն: Ան ըսաւ, որ եղբայրակցութեան իրաքանչիւր անդամը ուխտ կատարած է մնալու հաւատարիմ Զայ Եկեղեցւոյ կարգին, կանոնին, սրբութեանց եւ արժէքներուն:

Սրբազանը նշեց, թէ ամենուրեք եղբայրակցութեան անդամները տարածած են լոյս ու հաւատք, անսակարկ ծառայած են, անդուլ աշխատած են Զայ Եկեղեցւոյ անդաստանին մէջ, վկաները հանդիսանալով Տիրոջ խօսքին, դրօշակիրները՝ Զայ Եկեղեցւոյ հաւատքին, դաւանութեան եւ ջահակիրները՝ մեր հայրերու փոխանցած աւանդութիւններուն եւ սրբութիւններուն:

Առաջնորդ Սրբազանը Ս. Գիրքէն վկայակոչեց եւ ընթերցեց հատուածներ, ուր կը պատգամուէր ուրախ ապրիլ, սիրով մնալ եւ Յիսուսի հաւատալ: Սրբազանը ներկաներուն կոչ ուղղեց ամուր մնալու եւ հաստատ ճշմարիտ վարդապետութեան եւ դառնալու իրա՛ւ վկաները Յիսուսի, Ս. Զոգիով լեցուիլ եւ Անոր զօրութեամբ ու առաջնորդութեամբ կատարել մեր առաքելութիւնը: «Ս. Զոգիով Առաջնորդեցէք Ձեր կեանքերը, հաւատարիմ մնացէք Զայց. Առաքելական Եկեղեցւոյ կարգին, կանոնին եւ սրբութիւններուն», պատգամեց Առաջնորդ Սրբազանը, նշելով, որ այսպիսի կեանք ապրողները արժանի պիտի ըլլան Աստուծոյ կողմէ յաւիտենական կեանքի պսակին արժանանալու, սակայն այս կեանքին մէջ ալ անոնք արժանի պիտի ըլլան հոգեւոր պետերու եւ բոլոր մարդոց գնահատանքին: Առ այդ, Սրբազան Զայրը յայտնեց, թէ խնդրամատոյց է եղած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, որպէսզի իր օրհնութեան գիրը յղէ եղբայրակցութեան վաստակաշատ անդամներէն՝ եղբայր Յարութիւն Զափրագեանին: Ընդառաջելով Առաջնորդ Սրբազան Զօր խնդրանքին, Վեհափառ Զայրապետը, իր սրբատառ կոնդակով, «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը կը շնորհէ Յարութիւն Եղբօր:

Պահը յուզիչ էր: «Ուրախ Լեր» շարականին երգեցողութեամբ, Զայր Պարթեւ, Վեհափառ Զայրապետի կոնդակը բերաւ ու յանձնեց Առաջնորդ Սրբազան Զօր, որ ընթերցեց Օրհնութեան Գիրը եւ ապա, յանուն Վեհափառ Զօր՝ շքանշանով զարդարեց Յարութիւն Եղբօր կուրծքը: Իր կարգին, Յարութիւն Եղբայր երախտագիտական խօսք արտասանեց Աստուծոյ, եւ խոր սեր եւ շնորհակալութիւն՝ Նորին Սրբութեան եւ Սրբազան Զօր, որոնք արժանի համարած էին զինք այս կարգի շքանշանի:

Զուսկ, Սրբազան Զայրը, շրջապատուած եղբայրակցութեան երեց անդամներով, կտրեց 126-ամեակի կարկանդակը: Սարգիս եղբայր Տօրամճեան շնորհակալական խօսք արտասանեց Սրբազան Զօր եւ եղբայրակցութեան անդամներուն:

Փակման աղօթքով վերջ գտաւ սիրոյ այս ընթրիքը, եւ ներկաները տուն վերադարձան հոգեպէս լիցքաւորուած, գոհացած, եւ հոգեւոր ուրախութեամբ ու յոյսով զօրացած:

The Armenian Ecclesiastical Brotherhood's 126th Anniversary

GUIDED BY THE HOLY SPIRIT, REMAIN FAITHFUL
TO THE ARMENIAN APOSTOLIC CHURCH

DECLARED THE PRELATE

In the evening of Wednesday, May 3, 2006, the Armenian Ecclesiastical Brotherhood celebrated its 126th anniversary at the “Karapetian” Hall of Hollywood’s St. Garabed Church, under the auspices and with the attendance of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Accompanying the Prelate were Very Rev. Fr. Barhev Gulumian, Rev. Vicken Vassilian, and Executive Council Vice-Chair Dr. Hagop Der Megerdichian, along with representatives of the Brotherhood, and members of youth groups.

The evening began with the collective reciting of the Lord’s Prayer, followed by a prayer by the Prelate. The guests then sang the anthem of the Brotherhood, followed by welcoming remarks by Brother Hagop Ajemian.

Chairman and long-time servant Brother Arshag Kalenderian spoke of the 126-year history of the Brotherhood, after which Very Rev. Fr. Barhev Gulumian blessed the tables.

During dinner, youth group members entertained the guests with a spiritual-artistic program, under the guidance of Sister Nevart Tarpinian and Brother Avo Kabakchuzian. The evening also included Bible readings, poetry, and musical interludes.

In his remarks, the Prelate highly commended the Brotherhood and its close bond with the Armenian Church and our values. He pointed out that each individual member of the Brotherhood is a faithful servant of God who spreads the light and faith of the Armenian Church and remains faithful to the teachings and values of the Armenian Church.

The Prelate then announced that responding to his request, His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia had issued a Pontifical Encyclical bestowing the “St. Mesrob Mashdots” medal to Brother Haroutioun Chaprazian, a long time servant of the Brotherhood. With the singing of the hymn “Oorakh Ler”, Very Rev. Fr. Barhev Gulumian presented the Encyclical to the Prelate, who read its contents and bestowed the medal on him. Brother Chaprazian thanked the Lord, His Holiness the Catholicos, and the Prelate for finding him worthy of such acclaim.

The evening came to a close with the cutting of the 126th anniversary cake, after which Brother Sarkis Doramjian thanked the Prelate and guests, and lastly the closing prayer.